ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2022/65

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունիսի 2022 թ. N 65

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հայկական պետական ինստիտուտ» հիմնադրամ /ՀՖԿՍՊԻ/

Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 11

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **ինստիտուցիոնալ հավատարմագրում, 4 տարի ժամկետով՝ 19.10.2016թ.- 19.10.2020թ**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2021 թվականի հոկտեմբերի 22-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ, Ինստիտուտ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 22 հունվարի 2020թ.
ինքնավերլուծության ներկայացում՝ 27 մայիսի 2021թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 27-30 սեպտեմբերի 2021թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 19 հունվարի 2022թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝ 21 մարտի 2022թ.

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից անբավարար են գնահատվել **«Կառավարում ու վարչարարություն», «Մասնագիտության կրթական ծրագրեր», «Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայնացում» չափանիշները:**

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՀՖԿՍՊԻ-ի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ՀՖԿՍՊԻ-ի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

ՀՖԿՍՊԻ-ն 2016 թվականին ստացել է ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով և, հաշվի առնելով հավատարմագրման գործընթացի շրջանակում ստացված խորհրդատվությունները, կազմել է բարելավման գործողությունների ծրագիր: Ինստիտուտը մի շարք ոլորտներում իրականացրել է բարելավմանը միտված փոփոխություններ:

1. ***Ինստիտուտը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

ՄՈւՀ-ը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում բարձրագույն կրթություն իրականացնող միակ մասնագիտացված բարձրագույն ուսումնական հաստատությունն է, հետևաբար այն աշխատաշուկայում զբաղեցնում է գերակա դիրք:

Նախորդ հավատարմագրումից հետո ինստիտուտի ՄԿԾ-ները վերանայվել են:

ՀՖԿՍՊԻ-ն փորձում է իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային բարեփոխումներ՝ ուղղված բակալավրիատի և մագիստրոսական կրթական ծրագրերի վերջնարդյունքների հստակեցմանը և տարանջատմանը: Առկա են ՄԿԾ-ների լոկալ մակարդակում ազգային աշխատաշուկայի կարիքների ուսումնասիրություններ, որոնք համապարփակ վերլուծության չեն ենթարկվել:

Ինստիտուտում չնայած մշակված է կրեդիտային համակարգով ուսուցման կարգ, այդուհանդերձ կրեդիտների բաշխման հստակ ինստիտուցիոնալ քաղաքականությունը և ընթացակարգերը բացակայում են, առարկայական նկարագրերում կրեդիտների հաշվարկման և ուսուցման ու ուսումնառության մեթոդաբանության միջև կապը թույլ է: Կան խնդիրներ փոխհամաձայնեցնելու ՄԿԾ-ների վերջնարդյունքները ՀՀ ՈԱՇ-ի նկարագրիչների հետ:

ՄՈւՀ-ն ունի անհրաժեշտ ՊԴԿ և ուսումնաօժանդակ աշխատակազմ իր ռազմավարական նպատակների իրականացման համար:

Աշխատանքներ են տարվում կադրերի երիտասարդացման և մասնագիտական ոլորտից գործնական հմտություններով ու բարձր մասնագիտական որակներ ունեցող

ներգրավման ուղղությամբ: Ինստիտուտն աջակցում է ՊԴ և ՈՒՕ կազմերի մասնագիտական որակների բարձրացմանը, ներդրվել են դասախոսների տարբերակված հավելավճարի համակարգը և ՊԴ կազմի ատեստավորման, գնահատման և ինքնագնահատման մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ը թիրախային քայլեր է ձեռնարկել իր նյութատեխնիկական ու ռեսուրսային բազաների համալրման ուղղությամբ, առկա են ռեսուրսներ ուսումնական գործընթացը կազմակերպելու և մասնագիտությունների կրթական ծրագրերն իրականացնելու համար, ստեղծվել են պայմաններ հատուկ կարիքներով անձնանց համար:

2. *Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը*

ՀՖԿՍՊԻ-ն ունի ձևակերպված առաքելություն, իսկ ծավալած գործունեությունը հիմնականում համապատասխանում է ՌԾ-ին: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը ընդհանուր առմամբ համահունչ է ռազմավարական նպատակներին, սակայն կան տեսանելի խնդիրներ կառուցվածքային ստորաբաժանումների միջև արդյունավետ փոխհամագործակցություն ապահովելու ուղղությամբ:

Բուհում դեռևս արմատավորված չէ ռազմավարական կառավարումը, գնահատման առանցքային ցուցանիշները նոր են մշակվում և նոր են գործարկվելու:

Ինստիտուտի ղեկավարությունը, կարևորելով որակի ապահովման համակարգը, քայլեր է ձեռնարկում այն զարգացնելու համար: Նախորդ հավատարմագրման արդյունքում իրականացվել են որոշակի բարեփոխումներ, մշակվել են որակի ապահովման գործընթացները կանոնակարգող փաստաթղթեր: Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով բուհը տրամադրում է ֆինանսական և մարդկային ռեսուրսներ:

Այդուհանդերձ ՀՖԿՍՊԻ-ում որակի նեքին ապահովման համակարգը և որակի մշակույթը դեռևս կայացման փուլում են: Հիմնական գործընթացները գտնվում են պլանավորման, իրականացման, մասամբ նաև գնահատման փուլերում:

ՄՈՒՀ-ը մշակել է որակի ապահովման ձեռնարկ, սակայն դեռ հստակեցված և ամբողջական չեն այն մեխանիզմները, որոնք հնարավորություն կտային գնահատել հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավման ընթացքը:

3. *Միջազգայնացումն ու հետազոտական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը*:

ՀՖԿՍՊԻ-ն սահմանել է հետազոտության իր առաջնահերթությունները, որոնք սակայն շատ ընդգրկուն են և ոչ համաչափ առկա ռեսուրսներին, հետևաբար ոչ իրատեսական:
Բուհը խրախուսում է հետազոտությունների իրականացումը, որը հանգեցրել է նաև վերջին տարում արտասահմանյան պարբերականներում հոդվածների տպագրության աճին:

Գիտահետազոտական գործունեության կառավարման ոչ կանոնակարգվածությունը, քաղաքականության և ընթացակարգերի մեջ առկա վերոնշյալ թերությունները խոչընդոտում են ՄՈՒՀ-ում գիտահետազոտական աշխատանքների ուղղորդված արդյունավետ իրականացմանը, չկա նաև գիտության ոլորտի պատասխանատուի:

ՀՖԿՍՊԻ-ում առկա են ուսանողների հավաքագրման և ընդունելության հստակ մեխանիզմներ, ուսանողները ստանում են օժանդակություն ինչպես ՊԴ կազմի, այնպես էլ վարչական աշխատակիցների կողմից, առկա է խորհրդատվություն տրամադրելու և լրացուցիչ պարապմունքներ իրականացնելու հնարավորություն: ՄՈՒՀ-ում առկա են ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմներ, ստեղծված է բավարար միջավայր ուսանողների հաջող ուսումնառության համար:

ՄՈՒՀ-ում առկա է հաշվետվողականության համակարգ, որը ամփոփվում է ռեկտորի տարեվերջյան հաշվետվությամբ: ՄՈՒՀ-ն ունի մշակած մեխանիզմներ հաշվետվությունների ներկայացման համար, ապահովում է հասանելիություն արտաքին և ներքին շահակիցներին, տրամադրում է հաշվետվություն ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը, գործում են հետադարձ կապը ապահովող մեխանիզմներ, ապահովված է փաստաթղթերի հասնալեիությունը:

Միջազգայնացման համար ակտիվացող համագործակցային կապերը կարող են նպաստել կրթական ծրագրերի միջազգայնացմանն ու շարժունության ապահովմանը: ՄՈՒՀ-ը դեռևս չի ուսումնասիրել, գնահատել, վերլուծել և ի հայտ բերել այն շուկաները, որոնք ունեն մեծ ներուժ:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրը հիմնականում իրատեսական է և իրականացումը կբերի որակական բարելավումների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամին շնորհել ինստիտուցիոնալ **հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում ու վարչարարություն», «Մասնագիտության կրթական ծրագրեր», «Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայնացում»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:

3. **Հատուկ ուշադրություն դարձնել.**
   - ՀՖԿՍՊԻ-ի առաքելության հստակեցմանը՝ հաշվի առնելով ՄՈՒՀ-ի գերակայությունները և առանձնահատկությունները, մրցակցային առավելությունը և ՄՈՒՀ-ի կարևոր դերը սպորտային կրթության և հետազոտության ոլորտներում,
   - ռազմավարական և արդյունքահեն կառավարման համակարգի բարելավմանը,
   - որակական և քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
   - տվյալների հավաքագրման համակարգի բարեփոխմանը, հստակ քանակական և որակական տվյալների և վերլուծությունների վրա հիմնված որոշումների կայացմանը և հաշվետվությունների իրականացմանը,

- ՄԿԾ-ների բարելավմանը՝ հստակ ձևակերպելով ՈԱՇ-ի համապատասխան մակարդակի նկարագրիչներին համահունչ ՄԿԾ-ների ուսումնառության վերջնարդյունքները, ապահովելով դրանց տրամաբանական կապն ու չափելիությունը,
- կրեդիտների հաշվարկման, բաշխման ու կուտակման քաղաքականությանը, ընթացակարգերին և մեթոդաբանությանը,
- բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը,
- գիտահետազոտական գործունեության պլանավորման և իրականացման համակարգված մոտեցման կիրառմանը՝ հստակեցնելով գործընթացների կառավարման համակարգը,
- միջազգայնացման ռազմավարության ձևավորմանը,
- ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը,
- համալսարանի կառավարման և որակի ապահովման համակարգերի փոխկապակցմանը, որակի ապահովման համակարգի ազդեցության բարձրացմանը:

4. Կազմակերպել ՀՖԿՍՊԻ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:
5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով Համալսարանի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՀՖԿՍՊԻ-ի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:
7. Որոշումն ուժի մեջ է մտնում հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցվելու պահից:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2022 թ. հունիսի 14
ք.Երևան